2023

ԷՐԱԶՄՈՒՍ+ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակ

ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ



Տարածք	29,743 կմ²
Բնակչություն	2,989,091 (2023 թ. գնահատական)
Մայրաքաղաք	Երևան
Լեզու	Հայերեն
Կառավարման ձև	Խորհրդարանական հանրապետություն
Հիմնական կրոն	Հայ Առաքելական
Գրագիտության մակարդակ	99.7% (2023 թ. հաշվարկ)
Արժույթ	ՀՀ դրամ (1 եվրո = 412 դրամ, 2023թ.)
Ժամային գոտի	UTC + 4 ժամ

Աղբյուրը՝ CIA World Factbook

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- **2005թ.-ից երկաստիճան համակարգը կիրարկվում է ըստ Բոլոնիայի սկզբունքների** (բակալավրիատ 240 ECTS, մագիստրատուրա 120 ECTS, ասպիրանտուրա (համազոր Ph.D աստիճանի) 180 ECTS)
- **Հետազոտական աստիճանը (կրթության երրորդ մակարդակը) ներկայացված է**
- **ECTS կրեդիտային համակարգը** 100% ներդրված է բուհերում և բոլոր երկաստիճան կրթական ծրագրերում
- **Դիպլոմի հավելվածը** տրամադրվում է բոլոր հայաստանյան բուհերի կողմից
- **Մասնագիտացումների և կրթական ծրագրերի դասակարգիչները** համապատասխանում են 2011 թ.-ի ISCED կրթության միջազգային չափանիշներին
- **2008թ.-ից գործում է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը** (ՈԱԱԿ, www.anqa.am), որն իրականացնում է բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում
- **Բուհերում գործում են Որակի ապահովման կառուցվածքային միավորներ**
- **Բուհերում գործում են Միջազգային համագործակցության դեպարտամենտներ, բաժիններ կամ միավորներ**
- **Հաստատված է Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ),** որը բաղկացած է 8 մակարդակից
- **Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը** (ԱՓՇԱՏԿ, www.armenic.am) գործում է 2005թ.-ից որպես եվրոպական և միջ-ազգային որակավորումների փոխճանաչման համար պատասխանատու անկախ մարմին
- **ՀՀ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարությանը**

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021-2025թթ. փաստացի և կանխատեսվող բյուջետային հատկացումները կրթության ոլորտին (մլրդ. դրամ)



Աղբյուր՝ Ամբերդ հետազոտական կենտրոն, Ամբերդ Տեղեկագիր 4/17 2022թ.

Բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը (2021-2022թթ.)		Ուսանողների թիվը (2021թ.)
Պետական	28	78603
Մասնավոր	26	
Ընդհանուր	54	

Աղբյուր՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջ՝ http://escs.am/

Ուսանողների թիվն ըստ սեռերի (2021թ.)

Տղամարդ

47432

Կին

31171

Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ. վիճակագրական տարեգիրք

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2021-2022թթ. ուսումնական տարում ՀՀ բուհեր ընդունված ուսանողների տոկոսն՝ ըստ մասնագիտացումների



Արտասահմանցի ուսանողների թիվը 5 681-ն է (2021-2022թ.), ուսանողության ընդհանուր թվի 7 %-ը

Հնդկաստան՝ 37%

ԱՄՆ՝ 0.6%

Ռուսաստան՝ 25%

Մերձավոր Արևելք՝ 16%

Վրաստան՝ 13,8%

Կենտրոնական Ասիա՝ 1,1 %

2021-2022թթ. բուհերի աշխատակիցների թիվը	
Դասախոսական կազմ	13178
Վարչական կազմ	3206
Ընդհանուր	16384

Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ. վիճակագրական տարեգիրք

ՄԿՈՒ հաստատությունները *2021-2022թթ.		Ուսանողների թիվը
Նախնական	25	6 761
Միջին մասնագիտական	98	31 159
Ընդհանուր	123	37920

Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ. վիճակագրական տարեգիրք

ՄԿՈՒ ուսանողների բաշխվածությունն ըստ սեռերի (2021թ.)

Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ. վիճակագրական տարեգիրք

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2021-2022թթ. ուսումնական տարում ՀՀ ՄԿՈՒ հաստատություններ ընդունված ուսանողների տոկոսն՝ ըստ մասնագիտացումների:



2021-2022թթ. ՄԿՈՒ աշխատակիցների թիվը	
Նախնական	1035
Միջին մասնագիտական	3163
Ընդհանուր	4198

Աղբյուր՝ Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ. վիճակագրական տարեգիրք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԱԶՄՈՒՍ+ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հիմնական Գործողություն 1

- Միջազգային կրեդիտային շարժունություն (ICM) (որպես գործընկեր)
- Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրեր (որպես կոնսորցիումի գործընկեր և/կամ կրթաթոշակի դիմող անհատ)
- Էրազմուս Մունդուս Նախագծեր (որպես դիմորդ կամ գործընկեր)
- Վիրտուալ փոխանակումներ բարձրագույն կրթության և երիտասարդության համար (որպես գործընկեր)

Հիմնական Գործողություն 2

- Կարողությունների զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում (CBHE) (որպես դիմորդ կամ գործընկեր)
- Կարողությունների զարգացումը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում (CBVET) (որպես գործընկեր)
- Գիտելիքահենք գործընկերություններ (որպես գործընկեր, որը կարող է հավելյալ արժեք ստեղծել)
- Ռազմավարական համագործակցություններ (որպես գործընկեր, որը կարող է հավելյալ արժեք ստեղծել)

Հիմնական Գործողություն 3

- Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների թիմեր (ԲԿԲՓ)

- Ժան Մոնե Գործողություններ (որպես անհատ դիմորդ)

ԷՐԱԶՄՈՒՍ+ ԾՐԱԳՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Տեմպուս	Հայաստանը **Տեմպուսին** (Էրազմուս+-ին նախորդող ծրագիր) միացել է 1995թ.-ին: 1995-2013թթ.-ին հայաստանյան կառույցների մասնակցությամբ իրականացվել է **72 կոնսորցիումային ծրագիր,** որոնց իրագործման համար Եվրամիությունը տրամադրել է **3.8 մլն. եվրո դրամաշնորհ:**
Էրազմուս+ ՀԳ2 «Կարողությունների զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում»	Հայաստանի մասնակցությամբ Էրազմուս+ ՀԳ2 առաջին ծրագրերն ընտրվել են 2015թ.-ին: 2022թ.-ի դրությամբ այս գործողության շրջանակներում Հայաստանը մասնակցում է **34** ծրագրերի, որոնցից **11-ը** համակարգվել կամ համակարգվում են հենց հայաստանյան բուհերի կողմից:

Ծրագրի անվանումը	Համակարգող բուհը
"Library Network Support Services: modernising libraries in Armenia, Moldova and Belarus through library staff development and reforming libraries" (LNSS) **https://lnss-projects.eu/amb/**	Հայաստանի պետական կառավարման ակադեմիա (ՀՀ ՊԿԱ)
"Boosting Armenian Universities Internationalization Strategy & Marketing" (BOOST) **https://boost.aspu.am/**	Խ.Աբովյանի անվ. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ)
"Development and Implementation of Social Dimension Strategies in Armenia and Bosnia and Herzegovina through Cross-regional Peer Learning" (INCLUSION) **http://inclusionerasmus.org/**	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա (ՀԳՊԱ)
"Promoting internationalization of research through establishment of Cycle 3 QA System in line with the European Agenda" (C3QA) **https://c3-qa.com/**	Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀ)
"Introducing work-based learning in higher education systems of Armenia and Moldova for better employability of graduates" (WBL4JOB) **https://www.wbl4job.com/**	Հայաստանում ֆրանսիական համալսարան (ՀՖՀ)

Ծրագրի անվանումը	Համակարգող բուհը
“Change in Classroom: Promoting Innovative Teaching & Learning to Enhance Student Learning Experience in Eastern Partnership Countries” (Printel) **http://www.printel.am/**	Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
“Doctoral Programmes in Public Health and Social Science” (DPPHSS) **https://dpphss.am/**	Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ)
“Reforming Doctoral Education in Armenia in Line with Needs of Academia, Industry and Current EU Practices” (ARMDOCT) **http://www.armdoct.com/**	Եվրասիա միջազգային համալսարան (ԵՄՀ)
“Transforming Graduate Education for Green and Sustainable Future“ (T-Green)	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)
“Competences for International Innovation Projects” (CompIIT)	Հայաստանի Եվրոպական համալսարան
“Development of Aquaculture And Fisheries Education For Green Deal in Armenia and Ukraine: From Education To Ecology” (AFISHE)	Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ)

Ամբողջական ցանկին ծանոթանալու համար սքանավորեք հետևյալ QR ծածկագիրը:

Ընդհանուր առմամբ 25 համալսարան և ինստիտուտ, ինչպես նաև 22 գործընկեր հաստատություն (ազգային իշխանություններ, մասնագիտական կազմակերպություններ կամ միություններ, ՀԿ-ներ և ուսանողական մարմիններ) ներգրավվել են 34 Էրազմուս+ «Կարողությունների զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում» ծրագրերում:

Հայաստանի բուհերի ներգրավվածությունը Բարձրագույն կրթության 34 կարողությունների զարգացման ծրագրերում



12	Երևանի պետական համալսարան
11	Պոլիտեխնիկական համալսարան
8	Ճարտարապետության և շինարարության համալսարան
8	Բրյուսովի պետական համալսարան
7	Գավառի պետական համալսարան
6	Վանաձորի պետական համալսարան
6	Գորիսի պետական համալսարան
5	Ագրարային համալսարան
5	Տնտեսագիտական համալսարան
4	Երևանի պետական բժշկական համալսարան
4	Շիրակի պետական համալսարան
4	Ֆրանսիական համալսարան
3	Ռուս-Հայկական Համալսարան
3	Ամերիկյան համալսարան
3	Պետական մանկավարժական համալսարան
3	Եվրասիա միջազգային համալսարան
3	ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոն
2	Գեղարվեստի պետական ակադեմիա
2	ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
2	Պետական կառավարման ակադեմիա
2	Եվրոպական համալսարան
1	Կոնսերվատորիա
1	ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն
1	Հայբուսակ համալսարան
1	ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

Եվրոպական երկրների ներգրավվածությունը 34 ծրագրերում



ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ

Էրազմուս+ ՀԳ2 «Կարողությունների զարգացում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում» գործողության շրջանակներում Հայաստանի ՄԿՈՒ հաստատությունների մասնակցությամբ 2021թ.-ի հայտերի ընդունման առաջին հրավերի արդյունքում ընտրվել է 3 ծրագիր՝

1. “Developing Social Entrepreneurship schemes for VET institutions in Neighbourhood East” (SE VET) - Համակարգող՝ COSVITEC SOCIETA CONSORTILE ARL, Իտալիա
2. “Beyond Europe with Micro-credentials” (BEM) - Համակարգող՝ SACHSISCHE BILDUNGSGESELL-SCHAFT FURUMWELTSCHUTZ UND CHEMIEBERUFE DRESDEN MBH – SBG, Գերմանիա
3. “VET partnership For Green and Smart Electricity in Buildings” (VET4GSEB) – Համակարգող՝ SOFIA ENERGY CENTRE LTD, Բուլղարիա

ՄԿՈՒ ոլորտի կարողությունների զարգացման ծրագրերում ընդգրկված հայ գործընկերները

1 «Բիզնես և կրթություն համագործակցության հիմնադրամ»
2 Լոռու պետական տարածաշրջանային քոլեջ ՊՈԱԿ
1 Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
1 «Տանիք» ՀԿ

Ասոցացված երկրների գործընկեր կառույցները Հայաստանի հետ ՄԿՈՒ կարողությունների զարգացման 3 ծրագրերում



ԷՐԱԶՄՈՒՍ+ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Թոփ 3 ուղարկող բուհեր
(ըստ շարժունությունների քանակի)

Երևանի պետական համալսարան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Թոփ 3 ընդունող եվրոպական երկրներ
(ըստ շարժունությունների քանակի)

Լեհաստան

Իսպանիա

Իտալիա

Տարեթիվ	Մասնակիցներ	Մեկնող մասնակիցներ (դեպի ԵՄ)	Ժամանող մասնակիցներ (ԵՄ-ից)	Ընդհա-նուր
2022թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	825	375	1200
2021թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	-	-	-
2020թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	643	422	1065
2019թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	629	370	999
2018թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	534	307	841
2017թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	300	67	367
2016թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	446	200	646
2015թ.	Ուսանողներ + համալսարանի աշխատակազմ	577	311	881

ԺԱՆ ՄՈՆԵ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էրազմուս+ 2022թ Առաջարկների մրցույթի արդյունքում Եվրասիա միջազգային համալսարանը ստացել է շատ հեղինակավոր **Էրազմուս+ Ժան Մոնե «ԵՄ իրավական ուսումնասիրությունների և իրավական եվրոպականացում» ամբիոն** ստեղծելու հնարավորություն: Սա ԵՄ իրավունքի ոլորտում Ժան Մոնեի առաջին ամբիոնն է Հայաստանում, որի ղեկավարն է ԵՄՀ իրավաբանության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, **դոցենտ Աննա Խվորոստյանկինան:**

2015 թ.-ից մինչև 2022 թ. հայաստանյան շահառուների մասնակցությամբ Ժան Մոնե Գործողությունների ներքո հաստատվել և ֆինանսավորվել են 2 ցանցեր, 4 նախագծեր և 4 մոդուլներ:

Ժան Մոնե ցանցեր

1. «Եվրոպական ուսումնասիրությունների զարգացումը Կովկասում» (DESCent) **Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն,** Համակարգող՝ *Քրիստինե Գևորգյան*

2. «ԵՄ և ԵԱՏՄ. հակամարտության և մրցակցության միջև, մերձեցում և համագործակցություն» (EUCON), **հայ գործընկեր՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,** Համակարգող՝ *Հաննես Մեյսներ*

Ժան Մոնե նախագծեր

1. «Համեմատելով իրավական մոտարկման ռազմավարություններն ու լուծումները» (COMPASS), **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,** Համակարգող՝ *Աննա Խվորոստյանկինա*
2. «Եվրոպական ուսումնասիրությունների առաջխաղացումը Հայաստանում» (PROMOEU), **ISCOMET** - Էթնիկ և տարածաշրջանային ուսումնասիրությունների ինստիտուտ, Համակարգող՝ *Սիլվո Դևետակ*, **հայ գործընկերներ՝** Խ.Աբովյանի անվ. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, Վանաձորի պետական համալսարան, Գլաձոր համալսարան

Ժան Մոնե մոդուլներ

1. «Միգրացիոն քաղաքականության մարտահրավերները ԵՄ-ում և Հարավային Կովկասում», **Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, ԵՊՀ,** Համակարգող՝ *Արթուր Ղազինյան*
2. «Եվրոպական ինտեգրացիա և ԵՄ արժեքներ. մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն» - **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,** Համակարգող՝ *Տիգրան Թորոսյան*
3. «ԵՄ քաղաքականությունը, գործող կարգավորումներն ու վարչական կառուցվածքը» **- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,** Համակարգող՝ *Դիանա Գալոյան*
4. «Իրավական մոտարկման լաբորատորիա» (LegAL) - **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,** Համակարգող՝ *Աննա Խվորոստյանկինա*

ԷՐԱԶՄՈՒՍ ՄՈՒՆԴՈՒՍ ՆԱԽԱԳԾԵՐ

2022թ.-ին Երևանի պետական համալսարանն Առաջարկների մրցույթում շահել է Էրազմուս Մունդուս Նախագծեր գործողության ներքո առաջին ազգային ծրագիրը, որն իրականացվելու է Հայաստանի (համակարգող), Վրաստանի, Գերմանիայի, Լատվիայի և Լիտվայի հինգ համալսարանների կողմից:

Ծրագրի անվանումը՝ Եվրոպական ուսումնասիրություններ համատեղ մագիստրոսական ծրագրի մշակում. իրավունք, կառավարում և հաղորդակցություն/ DEGES

Ծրագրի համար՝ 101082758

Ֆինանսավորում՝ 55,000.00 €

Տևողությունը՝ 15 ամիս

Ծրագրի սկիզբը՝ հոկտեմբերի 1, 2022թ.

Համակարգող համալսարան՝
Երևանի պետական համալսարան, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն

Կոնտակտային անձ՝
Քրիստինե Գևորգյան
kristine.gevorgyan@ysu.am

Գործընկերներ՝
Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան, Վրաստան
Յենայի համալսարան, Գերմանիա
Վիձեմեի կիրառական գիտությունների համալսարան, Լատվիա
Վիլնյուսի համալսարան, Լիտվա

Ծրագրի նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է մշակել և նախագծել ԵԲԿՏ-ում համատեղ ծրագրերի որակի ապահովման ստանդարտներին համապատասխան լիովին ֆունկցիոնալ նոր միջդիսցիպլինար և նորարար Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագիր, որը կարող է հավատարմագրվել որակի ապահովման ազգային և/կամ միջազգային գործակալությունների կողմից:
Ծրագիրը նպատակ ունի նպաստել ուսումնական պլանի արդիականացմանն ու միջազգայնացմանը, մշակել միջազգային ուսանողների ընդունելությանն աջակցող համակարգ և նրանց ընդգրկել բուհական կյանքում, ընդլայնել համալսարանների, գիտնականների և հետազոտողների ցանցը և նրանց ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում, ինչպես նաև խթանել բարձրագույն կրթության միջազգայնացումն անդրազգային ծրագրի իրականացման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն գիտական անձնակազմի կարողությունների զարգացման դասընթացներ, սեմինարներ շահագրգիռ կողմերի, քաղաքականություն մշակողների, աշխատաշուկայի ներկայացուցիչների և ակադեմիական շրջանակների մասնակցությամբ: Ծրագրի վերջնարդյունքները կներկայացվեն ամփոփիչ համաժողովի ընթացքում՝ ծրագրի շահառուների, շահագրգիռ կողմերի, ուսանողների և քաղաքականություն մշակողների մասնակցությամբ:

ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Բացահայտել թիրախ բուհերի համատեղ մագիստրոսական ծրագրի առկա բացերն ու մարտահրավերները
2. Խթանել նորարարությունը՝ ուսումնառության, ուսուցման և հետազոտության մեջ նոր մեթոդների ներդրմամբ
3. Նպաստել մասնակից համալսարանների միջազգայնացմանը՝ խթանելով ծրագրի արդյունքները
4. Մշակել եվրոպական որակի միջդիսցիպլինար ծրագիր, որը կրկնակի/բազմակի կրթական աստիճաններ կշնորհի

Ծրագիրը կնպաստի (1) գործընկեր երկրներում՝ Հայաստանում և Վրաստանում եվրոպական ուսումնասիրությունների դասավանդման արդիականացմանը, (2) բոլոր բուհերում որակի ապահովման բարձրացմանը և համալսարանների ու կրթական ծրագրերի միջազգայնացման խթանմանը:

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էրազմուս+ 2021-2027թթ. ծրագրային շրջափուլի համար Եվրոպական հանձնաժողովի կողմից սահմանվել են հետևյալ առաջնահերթությունները՝

ՆԵՐԱՌՈՒՄ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրն իր բոլոր գործողություններում ձգտում է նպաստել հավասար հնարավորություններին և հասանելիությանը, ներառմանը, բազմազանությանը և արդարությանը:

Իրենց նախագծերն ու գործունեությունը նախագծելիս՝ կազմակերպությունները պետք է հաշվի առնեն հետևյալ ուղղությունները.

✔ Հաշմանդամության խնդիրներ, առողջական խնդիրներ, կրթության և վերապատրաստման համակարգերի հետ կապված խոչընդոտներ, մշակութային տարբերություններ, սոցիալական, տնտեսական, խտրականության հետ կապված և աշխարհագրական խոչընդոտներ:

ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Թվային կրթության գործողությունների ծրագրի ռազմավարական առաջնահերթություններին համապատասխան՝ 2021-2027թթ. շրջափուլում էրազմուս+ ծրագիրը նպատակ ունի աջակցել թվային փոխակերպման համընդհանուր ջանքերին և այս գործընթացում ներգրավել բոլոր ուսումնառողներին, մանկավարժներին, երիտասարդական աշխատողներին, երիտասարդներին և կազմակերպություններին:

Գործողությունների ծրագրի հիմնական ռազմավարական առաջնահերթություններն են՝

✔ Բարձր արդյունավետությամբ **թվային կրթական էկոհամակարգի զարգացում** բոլոր տեսակի կրթական և վերապատրաստման հաստատություններում քննադատական մտածողության և կարողությունների հզորացման միջոցով:

✔ Օգտագործել թվային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները կրթության բոլոր մակարդակներում և իրականացնել ուսումնական հաստատությունների թվային վերափոխման ծրագրեր:

✔ Հասարակության բոլոր մակարդակներում և բոլոր շերտերի համար իրականացնել **թվային հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն:**

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրության կենտրոնում կլինեն թե՛ բազային, թե՛ առաջադեմ թվային հմտությունները, որոնք թույլ կտան զարգացնել թվային գրագիտությունը ու մասնակցել քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության զարգացման գործընթացներում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Էրազմուս+-ն առանցքային գործիք կլինի կլիմայի փոփոխության վերաբերյալ գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի ձևավորման համար և կաջակցի կայուն զարգացմանը ինչպես ԵՄ-ի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Հիմնական աջակցություն է տրամադրվելու նորարարական հետևյալ պրակտիկաների կիրառմանը՝

✔ Գործողություններ, որոնք ուղղված են բնական ռեսուրսների խնայմանը, այլընտրանքային էներգիայի օգտագործմանը, թափոնների և ածխածնի հետքի կրճատմանը, սննդի և շարժունության խելամիտ ընտրությանը և այլն:

✔ Նախագծեր, որոնք հնարավորություն են տալիս վարքագծային փոփոխություններ կատարել և անհատական նախասիրություններն ու մշակութային արժեքները ծառայեցնել կայուն զարգացմանը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆԸ

Ծրագիրն աջակցում է ցկայնս ուսումնառության էթիկային և ակտիվ քաղաքացիությանը. այն նպաստում է սոցիալական և միջմշակութային իրավասությունների, քննադատական մտածողության և մեդիա գրագիտության զարգացմանը:

Առաջնահերթ են այն նախագծերը, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթության միջոցով մասնակցելու ժողովրդավարական կյանքին, սոցիալական և քաղաքացիական ներգրավվածությանը, ԵՄ համատեքստում ընդհանուր արժեքների, միասնության և բազմազանության սկզբունքների, ինչպես նաև սոցիալական, մշակութային և պատմական ժառանգության վերաբերյալ իրազեկման բարձրացմանը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների (ԲԿԲՓ) թիմերի խնդիրը Լիսաբոնի և Բոլոնիայի նպատակների իրականացման առաջընթացը ապահովելու գործում ազգային կարիքներին և ձգտումներին համապատասխան փորձառության փոխանցումն է:

Ազգային թիմի **առաքելությունն** է՝

- Աջակցել Հայաստանում կրթական քաղաքականության մշակմանը՝ տեղական իշխանությունների հետ սերտ կապի մեջ լինելով և նպաստելով բարձրագույն կրթության արդիականացման բարեփոխումների գործընթացներին և ռազմավարություններին, ինչպիսիք են, օրինակ՝ ուսումնական ծրագրերի մշակումը, կառավարման արդիականացումը, կրթական համակարգերի և հաստատությունների կառավարման և գործունեության խթանումը, բարձրագույն կրթության ոլորտի և ավելի լայն հասարակական և տնտեսական միջավայրի միջև հարաբերությունների ամրապնդումը և այլն:
- Աջակցել ՀՀ-ում ԵՄ-ի հետ բարձրագույն կրթության ոլորտում քաղաքական երկխոսությանը՝ օգտագործելով Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ստեղծված տարբեր քաղաքական հարթակների կամ Եվրոպական հանձնաժողովի կողմից և նրա ղեկավարությամբ ստեղծված այլ հնարավոր նախաձեռնությունների միջև առկա սիներգիաները:
- Աջակցել Էրազմուս+ ծրագրի և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի արդյունքների տարածմանը, հատկապես լավագույն փորձի և նորարարական նախաձեռնությունների տեսանելիության բարձրացմանը՝ վերջիններս օգտագործելով բարձրագույն կրթության արդիականացման և զարգացման նպատակներով:

Մասնագետներ, որոնք 2022 թ. ընդգրկվել են Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխման փորձագետների թիմում

ԱՐԵՎԻԿ ՕՀԱՆՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարան, Ռազմավարական ծրագրերի ղեկավար
arevik_ohanyan@eiu.am

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Խ.Աբովյանի անվ. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան,
Օտար լեզուների ֆակուլտետի դեկան
mikayelyantigran47@aspu.am

ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Երևանի պետական համալսարան,
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տարածաշրջանային
մագիստրոսական ծրագրի համակարգող
k.gevorgyan@ces.am

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա,
Ակադեմիական ծրագրերի մշակման ստորաբաժանման ղեկավար
ruzannagminasyan@gmail.com

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ (հաստատման ենթակա)
Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
Միջազգային կապերի դեպարտամենտի պետ
garegin77@gmail.com

ԷՐԱՍՄՈՒՍ+ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԸ

Անվանում և PIC կոդ	Կրթական ծրագրեր	Կոնտակտային անձ
Երևանի պետական համալսարան **PIC: 998298975**	Պատմություն, հայ բանասիրություն, քիմիա, ֆիզիկա, տնտեսագիտություն և կառավարում, մաթեմատիկա և մեխանիկա, կենսաբանություն, աշխարհագրություն և երկրաբանություն, իրավագիտություն, ռուս բանասիրություն, արևելագիտություն, ժուռնալիստիկա, փիլիսոփայություն և հոգեբանություն, ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, ռադիոֆիզիկա, սոցիոլոգիա, ռոմանագերմանական բանասիրություն, միջազգային հարաբերություններ և քաղաքական գիտություն, աստվածաբանություն	**Ալեքսանդր Մարգարով** **+374 10 55 52 40** amarkarov@ysu.am
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան **PIC: 934941291**	Քիմիական տեխնոլոգիա և բնապահպանական ճարտարագիտություն, ռադիոտեխնիկայի և հաղորդակցության համակարգեր, կիբեռնետիկա, համակարգչային համակարգեր և ինֆորմատիկա, ընդհանուր ճարտարագիտություն և մետալուրգիա, կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	**Անի Մամիկոնյան** **+374 10 56 79 68** grantsoffice@polytechnic.am animamikonyan@polytechnic.am
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան PIC: 934788322	Կառավարման, տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ, ֆինանսներ, մարքեթինգի և բիզնեսի կառավարում, համակարգչային գիտություն և վիճակագրություն, հաշվապահություն և աուդիտ	**Անժելիկա Մուսայելյան** **+374 10 59 34 84** int.office@asue.am
Խ.Աբովյանի անվ. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան **PIC: 947517923**	Բանասիրություն, պատմություն և իրավագիտություն, նախադպրոցական կրթություն, կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն, կրթական հոգեբանություն և սոցիոլոգիա, օտար լեզուներ, մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա, արվեստի ուսուցում, հատուկ կրթություն, մշակույթ	**Մարիաննա Հարությունյան** **+374 10 59 70 53** marianna.harutyunyan@aspu.am
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան **PIC: 943641512**	Թարգմանություն և միջմշակութային հաղորդակցություն, կրթություն և մասնագիտական մանկավարժություն, ռուսերեն և օտար լեզուներ, հասարակագիտություն և սերվիս	**Անի Հովհաննիսյան** **+374 10 53 02 72** intrel@brusov.am

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան **PIC: 953066614**	Ընդհանուր բժշկություն, հանրային առողջապահություն, ստոմատոլոգիա, դեղագիտություն, ռազմական բժշկություն	**Աննա Ղազարյան** **+374 10 56 05 94** international@ysmu.am
Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիա **PIC: 933000709**	Գեղարվեստ, դիզայն և դեկորատիվ կիրառական արվեստ	**Մարինե Պատվականյան** **+374 10 54 27 06** marpatv@gmail.com
Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա **PIC: 933246022**	Դաշնամուր, նվագախումբ, վոկալ տեսական	**Աննա Հովհաննիսյան** **+374 55 00 21 73** yksc@conservatory.am hannahovhannisyan@gmail.com
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ **PIC: 911631609**	Թատրոն, կինո, հեռուստատեսություն և անիմացիա, արվեստի պատմություն, տեսություն և կառավարում	**Զարուհի Սահակյան** **+374 10 53 62 87** zaruhi.sahakyan@ysitc.am
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան **PIC: 934004465**	Ճարտարապետություն, շինարարություն, զբոսաշրջություն և էկոլոգիա, դիզայն և զբոսաշրջություն, կառավարում և տեխնոլոգիա	**Վարդգես Եդոյան** **+374 10 58 01 77** edoyan@nuaca.am international@nuaca.am
Հայաստանի ամերիկյան համալսարան **PIC: 985620396**	Բիզնես և տնտեսագիտություն, հումանիտար և հասարակական գիտություններ, գիտություն և ճարտարագիտություն	**Գայանե Մակարյան** **+374 60 61 25 30** gmakaryan@aua.am
Հայաստանում ֆրանսիա-կան համալսարան **PIC: 924961349**	Իրավագիտություն, ֆինանսներ, կառավարում, մարքեթինգ	**Գոհար Ղալաչյան** **+374 10 24 96 48** international@ufar.am erasmus@ufar.am

Հայ-ռուսական համալսարան **PIC: 933562727**	Իրավագիտություն և քաղաքագիտություն, մաթեմատիկա և ինֆորմատիկա, ֆիզիկա և ճարտարագիտություն, կենսաբժշկություն և դեղագործություն, տնտեսագիտություն և բիզնես, հումանիտար գիտություններ, մեդիա, գովազդ և կինոարդյունաբերություն, արևելագիտություն	**Լիաննա Մարգարյան, Լիլիթ Վայրադյան** **+374 10 27 70 52** international@rau.am
Եվրասիա միջազգային համալսարան **PIC: 948603935**	Կառավարում, ֆինանսներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, իրավագիտություն, ժուռնալիստիկա, օտար լեզուներ և գրականություն, մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն), դեղագիտություն	**Պարսա Մք Ջեյքոբ** **+374 10 29 90 88 (ext 15)** Parsa.McJacob@eiu.am
Երևանի Հայբուսակ համալսարան **PIC: 933229920**	Բժշկություն, էկոլոգիա, իրավագիտություն և տնտեսագիտություն, արվեստ	**Արմինե Ծատուրյան** **+374 10 39 06 98** info@academedu.org
Հայաստանի Եվրոպական համալսարան **PIC: 934961952**	Կառավարում, Ֆինանսներ, Տնտեսագիտություն, ՏՏ, տեղեկատվական անվտանգություն, իրավունք, միջազգային հարաբերություններ, թարգմանչական ուսումնասիրություններ, մասնագիտական մանկավարժություն, հոգեբանություն, գրաֆիկական դիզայն, զբոսաշրջություն, մշակութաբանություն	**Գոհար Ավետիսյան** **+374 98 48 44 42** g.avetisyan@eua.am
ՀՀ պետական կառավարման ակադեմիա **PIC: 934629145**	Հանրային կառավարում, իրավագիտություն, քաղաքագիտություն և քաղաքական վերլուծություն, կառավարման հոգեբանություն, լեզուներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	**Թերեզա Խեչոյան** **+374 10 22 89 62** khechoyantereza@yahoo.com
Հայաստանի ազգային ագրարային համալսարան **PIC: 951898734**	Գյուղատնտեսություն, գյուղատնտեսական արտադրություն, մեքենայացում և մեքենաներ, անասնաբուժական բժշկություն և սանիտարական փորձաքննություն, ագրոբիզնես և մարքեթինգ, տնտեսագիտություն	**Գարեգին Համբարձումյան** **+374 12 58 58 08** garegin77@gmail.com
Միջազգային գիտակրթական կենտրոն, ՀՀ ԳԱԱ **PIC: 999586553**	Մաթեմատիկակա և տեխնիկական գիտություններ, ֆիզիկա և աստղաֆիզիկա, բնական գիտություններ, քիմիա և երկրագիտություն, հայագիտություն և հասարակական գիտություններ	**Արուսյակ Հարությունյան** **+374 10 56 04 98** fordep@isec.am

Գավառի պետական համալսարան **PIC: 937844404**	Բանասիրություն, տնտեսագիտություն, հումանիտար գիտություններ, բնական գիտություններ, հեռակա ուսուցում	**Լիլիթ Թոռչյան** **+374 60 46 12 64** lilit.torchyan.87@mail.ru
Հ. Թումանյանի անվ. Վանաձորի պետական համալսարան **PIC: 936719786**	Բանասիրության, պատմության և աշխարհագրություն, մանկավարժություն, ֆիզիկա և մաթեմատիկա, քիմիա և կենսաբանություն	**Գոհար Դոխոլյան** **+374 322 45 453** dokholyangohar@mail.ru
Մ. Նալբանդյանի անվ. Շիրակի պետական համալսարան **PIC: 934176058**	Բնական մաթեմատիկական գիտություններ, հումանիտար գիտություններ և արվեստ, հասարակական գիտություններ և իրավագիտություն, մանկավարժություն	**Հովիկ Մելքոնյան** **+3743 12 69 494** gspi1934@mail.ru
Գորիսի պետական համալսարան **PIC: 934580742**	Հումանիտար և հասարակական գիտություններ, բնական գիտություններ, ճարտարագիտություն և տնտեսագիտություն	**Նաիրա Սաֆարյան** **+374 91 33 31 05** nairasaf66@gmail.com
Հյուսիսային համալսարան **PIC: 921132371**	Իրավունք, Էկոնոմիկա, Մենեջմենթ, Ինֆորմատիկա, Լեզվաբանություն, Մանկավարժություն	**Արուսյակ Իվանյան** **+374 98 96 56 46** interndep@northern.am
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ **PIC: 915977791**	Սպորտ, Մասնագիտական մանկավարժություն, Հոգեբանություն, Մենեջմենթ, Մարքեթինֆ, Լրագրություն	**Անժելա Նուշիկյան** **+374 10 55 33 10 (ext. 127)** anzhela.nushikyan@sportedu.am
Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան	Ձեռագրագիտություն, արևելագիտություն, բանասիրություն և աշխարհիկ գրականության ուսումնասիրություն, արխիվագիտություն, հայ գրականություն, արվեստի և գրականության պատմություն, բժշկության և գիտության պատմություն, թարգմանական գրականության ուսումնասիրություն	**Սոնա Բալոյան** **+374 10 51 30 49** interrelmatenadaran@gmail.com

17 հայաստանյան բուհեր առաջարկում են անգլերեն լեզվով ուսուցանվող ծրագրեր կամ դասընթացներ:
Ցանկը կարող եք գտնել այստեղ՝ https://goo.gl/UZWozK

Հայաստանում
Էրազմուս+
ազգային գրասենյակ

Կ. Ուլնեցու 31/3 փ., 601 սենյակ,
0037 ք. Երևան, Հայաստան

+374 91 21 62 58

info@erasmusplus.am
program@erasmusplus.am

erasmusplus.am

neoarm

@ErasmusArmenia

@erasmusplusarmenia

Co-funded by the European Union

Սույն գրքույկն արտացոլում է միայն այն հեղինակած կազմակերպության տեսակետները և որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում հրատարակության բովանդակության և օգտագործված աղբյուրների համար: